ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼԻ
ՀԱՐՑԱՇԱՐ - 12-րդ դասարան - 90 րոպե

1. Ո՞ր պնդումն է ճիշտ Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարեր» վեպի վերաբերյալ:
1) «Ծաղկած փշալարեր» վեպը լույս է տեսել հետպատերազմյան տարիներին, Երևանում:
2) Վեպում նկարագրվում են Վանի հերոսամարտի մասնակիցները:
3) Վեպն ընդգրկում է Մահարու երկրորդ աքսորի ժամանակները:
4) «Ծաղկած փշալարեր»-ը ինքնակենսագրական վեպ է:

2. Պնդումներից ո՞րն է սխալ Մահարու «Մրգահաս» ժողովածուի վերաբերյալ:
1) «Մրգահաս» ժողովածուն նվիրված է Եղիշե Չարենցին:
2) «Մրգահաս» ժողովածուում բնության և մարդկային նուրբ ապրումներով գրված բանաստեղծություններ են:
3) Մահարու «Բալլադ Չալոյի և առաջին սիրո մասին» բանաստեղծությունը հուզիչ պատմություն է մանկության և առաջին սիրո մասին:
4) «Այրվող այգեստաններ» վեպով է ավարտվում«Մրգահաս» ժողովածուն:

3. Պնդումներից ո՞րն է ճիշտՆաիրի Զարյանի «Երկու հանճարեղ գլուխ» բանաստեղծության վերաբերյալ:
1)Երկու հանճարները նստած են արքայի պալատում և զրուցում են:
2)Երևում է արքայի կառքը և երկու հանճարները խոնարհում են իրենց գլուխները՝ հարգելով իշխանությանը:
3)Երկու հանճարներն էլ արհամարում են արքային և շարունակում իրենց ճանապարհը:
4)Հանճարներից մեկը խոնարհում է գլուխը, իսկ մյուսը՝ ոչ:

4. Ընտրեք ճիշտ պատասխանը:
1) Գուրգեն Մահարին գրել է միայն արձակ ստեղծագործություններ:
2) Մահարին գրել է ինքնակենսագրական 3 վեպ:
3) «Այրվող այգեստաններ» վեպում Մահարին անմահացրել է իր ծննդավայրը:
4) Մահարին գրել է II աքսորի տարիների մասին:

5. Ո՞ր պնդումն է ճիշտ:
«Ծաղկած փշալարեր» վեպում նկարագրված են՝
1) Գրական աշխարհի մարդիկ:
2) Տարբեր տարիքի և մասնագիտության տեր մարդիկ:
3) Մահարու մանկության տարիները:
4) Վեպում մերժվում է սերը:

6. Ո՞ր պնդումն է ճիշտ Նաիրի Զարյանի «Ասք Անդրանիկ զորավարի » պոեմի վերաբերյալ:
1) Զարյանը մեղադրում է իրեն՝ Անդրանիկի թուրը համարելով «արնախում» :
2) Զարյանը արդարացնում է Անդրանիկի վտարանդի դառնալը:
3) Զարյանը դատապարտում է Անդրանիկին՝ թշնամու դեմ չարանալու համար:
4) Զարյանը Անդրանիկին չի համեմատում Գարիբալդիի հետ:

7. Ո՞ր պնդումն է ճիշտ Նաիրի Զարյանի ստեղծագործության վերաբերյալ։

1) Զարյանը գրել է միայն բանաստեղծություններ։
2) Զարյանի պոեզիան չի անդրադառնում հայրենիքի ճակատագրին։
3) Զարյանը և՛ բանաստեղծ է, և՛ արձակագիր, և՛ դրամատուրգ։
4) Զարյանը չի զղջում իր մեղանչումների համար։

8. Ո՞ր պնդումն է սխալ Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպի վերաբերյալ։

1) Վեպն ընդգրկում է 1918-1921 թվականների՝ Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները։
2) Վեպի գլխավոր հերոսը դավաճանում է իր սկզբունքներին և վերադառնում Բաթում։
3) Վեպն ունեցել է երկու տարբեր հրատարակություն։
4) Վեպը խանդավառությամբ չընդունվեց հայրենիքում և վերախմբավորվեց։

9. Ո՞ր պնդումն է ճիշտ Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպի հերոս Արա Հերյանի վերաբերյալ։

1) Արա Հերյանը հեռավոր նավարկությունների նավապետ էր և եկել էր հայրենիք՝ Սևանա լճում նավագնացություն կազմակերպելու համար։
2) Արա Հերյանի քաղաքական համակրանքը մեծամասնականների կողմն է։
3) Հերյանը ամուսնանում է Դաշենկայի հետ։
4) Արա Հերյանը դառնում է կուսակցական գործիչ և ապրում լիարժեք կյանքով։

10. Պնդումներից ո՞րն էսխալ Հովհաննես Շիրազի ստեղծագործության վերաբերյալ։

1) Շիրազը իր պոեզիայում գովերգել է քաղաքային կյանքը։
2) Շիրազի մասիսապաշտությունը նրա պոեզիայի հիմնական թեմաներից է։
3) Շիրազը գրել է Ստալինին նվիրված բանաստեղծություն։
4) Մայրերգությունը Շիրազի պոեզիայի անկապտելի մասն է։

11. Պնդումներից ո՞րն է բնութագրական Շիրազի ստեղծագործության վերաբերյալ։

1) Շիրազի պոեզիայում կենտրոնական տեղ է գրավում հայրենիքի թեման։
2) Շիրազը չի անդրադարձել հայրենիքի ողբերգական կերպարին։
3) Շիրազը չունի խոհափիլիսոփայական պոեմ՝ նվիրված մարդուն, նրա ուժին և հնարավորություններին։
4) Շիրազի պոեզիայում բացակայում է բնությունը։

12. Պնդումներից որ՞ն է սխալ Պարույր Սևակի ստեղծագործության վերաբերյալ։

1) «Մարդը ափի մեջ» շարքն ընդգրկում է մարդ և դարաշրջան, մարդ և հանրային կյանք, մարդ և մարդկայնություն հարաբերություններ։
2) Սևակը իր ստեղծագործություններում չի անդրադարձել իր ժամանակաշրջանի արատավոր երևույթներին։
3) «Մարդը ափի մեջ» շարքում ամեն ինչ սկսվում է մարդու փառաբանությունից և կրկին վերադառնում մարդուն, որը «մարդուն հավասար է դարձնում իր ստեղծած աստծուն»։
4) Սևակը ունի ինքնակենսագրական բանաստեղծություններ։

13. Պնդումներից որը՞ չի բնորոշում Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործության թեմատիկան:
1) Հրանտ Մաթևոսյանը նկարագրել է գյուղական հովվերգության փլուզումը:
2) Մաթևոսյանի ստեղծագործության մեջ հավասարապես տեղ են գտել մարդ և կենդանի հերոսները:
3) Իր ստեղծագործություններում Մաթևոսյանը չի անդրադարձել աշխատանքով գեղեցկություն ստեղծելու բարոյախոսությանը:
4) «Բեռնաձիեր» շարքում գրողը Ծմակուտը հակադրում է քաղաքակիրթ, բայց անբարոյական աշխարհին:

14. Պնդումներից որը՞ բնորոշ չէ Սահյան պոետի բնութագրին:
1) Համո Սահյանը ոչ միայն անխառն քնարերգու է , այլև ունի քաղաքացիական հզոր կիրք:
2) Իր ստեղծագործություններում Սահյանն ընդգծում է մարդու և բնության անկապտելի կապը:
3) Սահյանի ստեղծագործությունները շաղախված են հայրենի եզերքի կարոտով:
4) Սահյանը չունի փիլիսոփայական ենթատեքստ ունեցող բանաստեղծություններ:

15. Պնդումներից ո՞րն է սխալ XX դարի գրականության վերաբերյալ:
1) XX դարի գրականությունը չի անդրադարձել ժամանակի հուզող թեմաներին, պատմական խոշորագույն իրադարձություններին:
2) XX դարում արևելահայ և արևմտահայ գրողներին հուզում էին ժողովրդի ճակատագրի նույն թեմաները:
3) XX դարում արևմտահայ գրականությունը վերածվեց Սփյուռքի գրականության՝ հնչեցնելով նահանջի շեփոր:
4) XX դարի II կեսին գրականություն մտած նոր անունները՝ Սահյան , Կապուտիկյան, Սևակ, Դավթյան և այլք, գրականություն բերեցին նոր շունչ ու մտածողություն:

16. Հերթականությամբ նշի՛ր Եղիշե Չարենցի պոեմները:
1.«Հառաչանք», 2. «Դանթեական առասպել», 3. «Զայն հայրենական»,
4. «Ամբոխները խելագարված», 5. «Լևոնի վիշտը», 6. «Անլռելի զանգակատուն»,
7. «Եռաձայն պատարագ», 8. «Թոնդրակեցիներ», 9. «Մաճկալ Սաքոյի պատմությունը»:

17. Հերթականությամբ նշի՛ր միայն XX դարում ստեղծագործած գրողներին:
1. Հովհաննես Թումանյան, 2.Եղիշե Չարենց, 3. Ակսել Բակունց,
4. Գեղամ Սարյան, 5. Հրաչյա Հովհաննիսյան, 6.Միլվա Կապուտիկյան,
7. Մարո Մարգարյան, 8. Մուրացան, 9.Ռազմիկ Դավոյան:

18. Հերթականությամբ նշի՛ր Հրանտ Մաթևոսյանի ժողովածուները:
1. «Երկիր նաիրի», 2. «Տաղարան», 3. «Օգոստոս»,
4. «Անձրևը», 5. «Մթնաձոր», 6. «Ծառերը»,
7. «Մեր վազքը», 8. «Քնար Հայաստանի», 9. «Հավերժական զագաթներ»:

19. Հերթականությամբ նշի՛ր, թե որ հատվածը Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է:

1. Եվ մենք այդ գիշեր մնացինք այդտեղ
   Մեռած քաղաքի ավեր շենքերում:
2. Եվ հավատացինք հարբած ու գինով,
   Որ դու. կաս՝ հզոր, մարմնացում Ուժի-
   Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով
   Մեր երկիրը հին դարձրին փոշի…
3. Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
   Ոչ մի ստվեր կախաղանին թող մոտ չգա…

1. «Մահվան տեսիլ», 2. «Դանթեական առասպել», 3. «Վահագն»:

20. Նշել տրված տողերի ճիշտ հաջորդականությունը:

1. Մնաք բարով ասում եմ ես բոլոր մարդկանց՝ չար ու բարի
   Տանջվող ու որբ Ադամորդուն ասում եմ ես մնաք բարով:
2. Մնաք բարով, ասում եմ ես, ընկերներիս՝ մոտ ու հեռու
   Ոսոխներիս՝ չար ու արթուն, ասում ես մնաք բարով:
3. Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես մնաս բարով,
   Բորբ արևին՝ իմ բոց սրտում , ասում եմ ես մնաս բարով:

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան